Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր

Մարզադաշտի շրջակա տարածքի որպես մշակութային այգու զարգացման նախագիծ

Նախնական տեխնիկական գնահատում

Բովանդակություն

1.Ներածական էջ 3
2. Ամփոփագիր՝ վայրը և դրա կառավարումը 4
3. Վարչական տեղեկություններ 7
4. Վիճակի եզրակացություն 9
5. Առկա տեղեկություններ 10
6. ՆՏԳ-ի շրջանակը 12
7. ՆՏԳ 13
9. Նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություններ 22

1.Ներածական էջ

Նկ.1. Դիտակետ. անվանյալ տարածքի ընդհանուր տեսքը արևելքից

Նկ.2. Գոյություն ունեցող ֆուտբոլի դաշտի տեսքը արևելքից

1.1 Երկիրը կամ տարածքը ՀՀ Սյունիքի մարզ ք. Գորիս
1.2 Տեղեկությունները համադրող կազմակերպության անունը Գ.Գ.Փարսյան
1.3 Կոնտակտային անուն բջջ. 093996030
1.4 էլ-հասցե g.g.parsyan@yandex.ru
1.5 Շենքի կամ վայրի անվանումը և հասցեն
ք. Գորիս Այգեստան թաղամաս<Դիտակետ>անվանյալ տարածք
1.7 Շենքի/հուշարձանի/վայրի տեսակը ընդհանուր օգտագործման տարածք
1.9 Ընթացիկ կիրառում(ներ)ը
90-ական թվականներին կառուցված ֆուտբոլի մարզադաշտ, այգեգործական հողատեսքեր

2. Ամփոփագիր՝ վայրը և դրա կառավարումը

Սյունիքի տարածքում մեր թվագրությունից հազարամյակներ առաջ ծագել և բնապատմական յուրօրինակ պայմաններում զարգացել է մի հարուստ և ինքնատիպ ժողովրդական ճարտարապետություն ունեցող քաղաք: Ցարական իշխանության ժամանակ առանձնապես մեծ էր կարևոր ճանապարհների հանգույցակետում գտնվող Գորիս քաղաքի դերը իբրև Զանգեզուր գավառի առևտրական և վարչական կենտրոն: Մինչև քաղաք դառնալը Գորիսը (պատմական Զանգեզուրը, իսկ ժողովրդի բարբառով Կյորեսը կամ Ծենը) եղել է Զանգեզուրի մեծ գյուղերից մեկը Որոտանի վտակ Գորիս գետի ձախափնյա մասում: Քաղաքի հիմնադրման աշխատանքները սկսվել են 1850թ., սակայն շինարարական և հատակագծման աշխատանքները հիմնավոր և կազմակերպված բնույթ են ստացել 1870թ. Ստարացկի գավառապետի ժամանակ Մանուչար-Բեկ Մելիք Հյուսեինյանի գործուն մասնակցությամբ:

Գորիսը պաշտոնապես քաղաք դարձավ 19-րդ դարի 80-ական թթ. վերջին: Նրա զարգացման համար մեծ նաշանակություն է ունեցել Անդրկովկասում ճանապարհաշինարարության զարգացումը, մասնավորապես Շուշի-Գորիս ճանապարհի շինարարությունը 1869-1877 թթ-ին:

Հաշվի առնելով քաղաքի հեռանկարային զարգացման գործընթացում ռեկրեացիոն, հատկապես զբոսաշրջային ոլորտի գերակայությունը, պատմական միջավայրի վերակենդանացման նպատակով առաջարկվում է Վարարակն գետի աջափնյա հատվածում տեղակայված, քաղաքի պատմական կենտրոնի ու « Հին Գորիս» քարանձավային գյուղի միջնամասում փռված գեղատեսիլ գետահովիտը: Առանձնացված հատվածի զարգացումը նախատեսում է տարածքի բարեկարգում , սպորտ հրապարակների, զրուցարանների, ձիասայլերի և հեծանիվների վարձույթի կետերի, ավտոկայանատեղերի ներառմամբ: Նախատեսվող համալիրի հետիոտն մատչելիությունը պատմական կենտրոններից կազմում է 10-12րոպե, որի մոտեցումները առաջարկվում է բարեկարգել կանաչապատ ճեմուղիներով,: Կողային մասերում կազմակերպելով բարեկարգ, տեսարանի ընկալման բարենպաստ պայմաններով տարածքներ՝ շրջապատի բնական հուշարձանների ընկալման համար: Առանձնացված տարածքը ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 6.5հա, որը ներկայումս կառուցապատված է միայն ֆուտբոլային դաշտով՝ իր կիսաքանդ մետաղական նստատեղերով: Նախատեսվող հեռանկարանային կառուցվածքի ձևավորման գործընթացում հատուկ ուշադրություն է դարձվում քաղաքի տնտեսական զարգացման գերակա ճյուղի՝ ռեկրեացիոն ոլորտի, հատկապես զբոսաշրջության ենթակառուցվածքների ինտեգրմանը ընդհանուր կառուցվածքում: Հատկացվող տարածքը տեղակայված է զբոսաշրջային հիմնական երթուղիների կենտրոնում , որոնք կապում են քաղաքի պատմական կենտրոնը և քարանձավային գյուղը, օգտագործելով նաև քաղաքի և համայնքի տարածքում առկա ռեկրացիոն հնարավորությունները: Վերը նշված տարածքում նախատեսվում է բնակչության ազատ օրերի հանգստի կազմակերպում, որի համար առաջարկվում է տարածքում կազմակերպել ռեկրացիոն բնույթի օբյեկտներով, ուղղորդելով ռեկրեացիոն հոսքերը ապահովելու առավել խնայողական բնօգտագործում, առաջարկելով ճեմուղային-արահետային ցանց, տարածքներ վրանային ճամբարների, խարյուկների, ինչպես նաև կառույցներ կազմակերպված ժամանցի անցկացման և զբոսաշրջային ցիկլերի առաջարկման համար, երիտասարդական ժամանցի կենտրոններ,

խաղասրահներ, խաղահարթակներ: Անհրաժեշտ է ամբողջ տարածքի ափամերձ եզրագծով կառուցել հետիոտն ծառապատ ճեմուղի, սալիկապատմամբ, օգտագործելով գետից հանված գլաքարերը: Հասարակական, սպորտային, մանկական ու զվարճանքի կառույցները նախատեսելիս հաշվի առնել բնակչության հաշմանդամ և նվազ շարժունակ խավի շահերը: Նախագծման ընթացքում առաջնային նշանակություն ու կարևորություն ունի «Վարարակն» գետի աջափնյա գետափնյա ճանապարհի կառուցումը՝ կազմակերպելով տրանսպորտային և հետիոտն փողոց, ապահովելով հարմարավետ տրանսպորտային կապ, հնարավորություն ընձեռնելով նախատեսված կառուցապատման գոտիների սպասարկման օբյեկտների անխափան գործառումը, արտակարգ իրավիճակներում մոտեցումների ապահովումը, ափամերձ տարածքով հետիոտն ճեմուղու ապահովումը:

Քաղաքային տարածքի և մասնավորապես նախատեսվող հողատարածքի համար վտանգ է ներկայացնում «Վարարակն» գետի հեղեղաբերությունը: Գետի սելավաբերության և սելավների դեմ պայքարի համար առաջարկում ենք մեծ ծախսերի հետ չկապված միջոցառումներ, այն է գետահունի ափերի ամրացում քարե շարվածքով, որը հնարավորություն կտա ջրի հոսքի մեղմացմանը: Քարե շարվածքի դեպքում քարը կհանվի գետի հունից՝ մաքրելով նաև գետի ավազանը:

Նկ.3. Գոյություն ունեցող ֆուտբոլի դաշտի տեսքը արևելքից

Նկ.4. Տարածքի ընդհանուր տեսքը հյուսիս արևելքից

Նկ.5 Գոյություն ունեցող ֆուտբոլի դաշտի տեսքը արևելքից

3. Վարչական տեղեկություններ

3.1 Պատասխանատու մարմիններ՝

Հայաստանի Հանրապետություն.Գորիսի քաղաքապետարան

3.2 Շենք/վայր, անվանում և հասցե

ՀՀ Սյունիքի մարզ ք. Գորիս Այգեստան թաղամաս < Դիտակետ> անվանյալ տարած

3.3 Քարտեզին հղում

Նկ.6. Գորիս քաղաքի գլխավոր հատակագիծ

3.4 Հուշարձանի տեսակը

Գորիսի համայնքի քաղաքի կառուցապատման տարածքում գտնվող ընդհանուր օգտագործման համար նախատեսված հողեր: Տարածքի հյուսիս արևմտյան հատվածում գտնվում են 18-19րդ դարերի ձիթհանների լքված և կիսավեր շինություններ, որոնք նպատակահարմար է վերանորոգել և շահագործել ըստ նպատակահարմարության: Վերը նշված ձիթհաններն և դրանց սպասարկող շինությունները ներկայումս հաշվառված չեն

որպես հուշարձաններ, ուստի խիստ անհրաժեշտ է դրանց հայտնաբերումը, հաշվառումը և վերականգնումը, որպես մշակույթային արժեք:

3.5 Սեփականության իրավունք

Տարածքը հանդիսանում է համայնքի սեփականություն, որտեղ ներկայումս կառուցված է ֆուտբոլի մարզադաշտ, որը նույնպես հանդիսանում է համայնքի սեփականություն: Տարածքի հիմնական մակերեսը ներկայումս մշակվում է հարևանությամբ բնակվող քաղաքացիների կողմից, առանց որևէ իրավունքի տեսակի:

3.6 Օրենքով սահմանված պաշտպանություն/ սահմանափակումներ

Առանձնացված տարածքում ցանկացած կառուցապատում, համաձայն ՀՀ –ում գործող օրենքների պետք իրականացվի է քաղաքպետարանի համաձայնությամբ և թույլտվությամբ:

4. Վիճակի եզրակացություն

Տարածքի աննպատակահարմար և տարերայնորեն օգտագործումը հանգեցրել է վայրի աղտոտվածությանը, թփակալմանը, որը բնապահպանական խնդիրներից բացի առաջացնում է նաև անվտանգության խնդիր:

Նկ.7. Տարածքի բնապատկերը Գորիս գյուղ բնակավայրից

Նկ.8. Տարածքի ընդհանուր տեսքը Վարարակն գետի աջ ափին

5. Առկա տեղեկություններ

5.1 Փաստագրական աղբյուրներ

Նկ 9. Տարածքի ընդհանուր տեսքը և դիրքը արբայնակային լուսանկարով



1. 8615926.0394, 4375065.3941
2. 8615845.5147, 4375062.4969
3. 8615791.1400, 4375081.5192
4. 8615708.4948, 4375152.0873
5. 8615854.8519, 4375288.5743
6. 8615916.8356, 4375414.7695
7. 8615953.7771, 4375614.8034
8. 8615960.4020, 4375746.1826
9. 8615924.9141, 4375898.0321
10. 8615935.2660, 4375931.3491
11. 8615978.1559, 4375891.0383
12. 8616002.4210, 4375784.4879
13. 8615999.6276, 4375587.2889
14. 8615983.8918, 4375416.9645
15. 8615990.4317, 4375259.3516

Նկ. 10. Տարածքի եռաչափական քարտեզ

5.2 Օգտագործված նյութեր

Գլխավոր հատակագիծ, քաղաքի պատմության վերաբերյալ գրականություն, Գորիսի զարգացման հնգամյա ծրագիր

5.3 Արդեն կատարված դաշտային աշխատանքներ

Տեխնիկական գնահատումն իրականացվել է տեսողական դիտարկումների մակարդակով, քաղաքապետարանի մասնագետների կողմից, մարզադաշտի տրանսպորտային և հետիոտն

մոտեցման ճանապարհները կառուցելու ժամանակ 1985-87թթ: Մեր կողմից կատարվել է տարածքի չափագրում և հատակագծի կազմում X Y կորդինատական համակարգում :

5.4 Ընթացիկ ծրագրեր

Տվյալ վայրի հետ կապված ընթացիկ ծրագրեր ներկայումս չկան: Գորիսի քաղաքապետարանի կողմից ներկայացվել են բազմաթիվ առաջարկներ Սյունիքի մարզպետարան, ֆուտբոլի ֆեդերացիա՝ մարզադաշտի վերանորոգման , հարակից տարածքների բարեկարգման առաջարկով, որոնք ընդունվել են, սակայն ֆինանսական սուղ պայմաններից ելնելով մնացել են առաջարկների մակարդակի վրա:

5.5 Արդեն պլանավորված ծրագրեր

Իր բնական դիրքից ելնելով, տարածքը միշտ էլ եղել պետության և համայնքի ուշադրության կենտրոնում:
Դեռևս 90-ական թվականներին տարածքի հարավային, համեմատաբար լայն մասում կառուցվել է ֆուտբոլային մարզադաշտ, ենթադրելով տարածքի հետագա կառուցապատում և բարեկարգում: Քաղաքի այս հատվածի զարգացումը ներառված է քաղաքի քառամյա ծրագրերում, հիմք ընդունելով գլխավոր հատակագիծը և քաղաքի հեռանկարային զարգացման նախագծերը:

5.6 Արդեն կատարված ֆինանսական հաշվարկներ

Տվյալ վայրի զարգացման համար ֆինանսական հաշվարկներ չեն իրականացվել:

6. ՆՏԳ-ի շրջանակը

6.1 Գնահատման չափը /բնույթը

Նախնական գնահատման աշխատանքներին մասնակցել է մեկ տեղական փորձագետ, որի զբաղվածությունը կազմել է 7 աշխատանքային օր, որից 2 օրը ուսումնասիրության համար, 5օրը շարադրման և ներկայացման համար:

6.2 Ուսումնասիրության սահմանափակումները

Տարածքի սեփականության ձևից ու կառուցապատման բացակայությունից ելնելով նշված տարածքում ուսումնասիրությունների և գոյություն ունեցող փաստաթղթերին ծանոթանալու համար սահմանափակումների և արգելքների ուսումնասիրության ընթացքում չենք հանդիպել, ավելին Գորիսի քաղաքապետարանը դրամադրել է ունեցած տվյալները:

7. ՆՏԳ

7.1 Նախապատմություն՝ձևը, գործառույթը և զարգացումը

7.1.1 Շենքի/վայրի համառոտ նկարագիրը՝ դրա քաղաքային կամ գյուղական համատեքստի վերաբերյալ նշումներով, եթե կիրառելի է:

Զարգացման համար նախատեսված վայրը Գորիսի Վարարակն գետի աջափնյա հատվածում սփռված շուրջ 6.5հա մակերեսով հողատարածք է: Ռելիևֆն այդ հատվածում համեմատաբար մեղմ է, և բարենպաստ կառուցապատման աշխատանքներ իրականացնելու համար: Աշխարհագրական դիրքը ևս բարենպաստ է՝ գտնվելով զբոսաշրջային երթուղիների խաչմերուկում, քաղաքի պատմական կենտրոնի և քարանձավային բնակատեղի միջնամասում, մատչելի է հետիոտն ու տրանսպորտային հաղորդակցության համար:

7.1.2 Շենքի կամ վայրի՝ վաղ ժամանակներից մինչև մեր օրերը պատմական զարգացման և էվոլյուցիայի համառոտ ակնարկ:

Գտնվելով հին Գորիս գյուղի, ժամանակակից քաղաքի ծայրամասում և գետի հարևանությամբ, նախատեսված վայրում հիմնականում զբաղվել են այգեգործությամբ: Բնական ռելիևֆի առանձնահատկությունից ելնելով 90-ական թվականներին այդ տարածքում կառուցվել է բաց մարզադաշտ, որը չնայած անավարտ վիճակին ներկայումս ևս շահագործվում է:

7.2 Նշանակություն

Վերջին 30-40 տարիների ընթացքում առանձնացված վայրը քաղաքի բնակչության համար հանդիսանում է միակ սպորտային , զվարճանքի վայր, որի նշանակությունը էլ ավելի կբարձրանա վերակառուցման, բարեկարգման աշխատանքներ իրականացնելու դեպքում:

7.2.1 Նշանակության/պատմական և ժառանգության կարևորության վերաբերյալ ամփոփ նկարագիր:

Զարգացման համար առանձնացված վայրն ունի սոցիալական ու տնտեսական նշանակություն քաղաքի համար, որը կարևորագույն դիրք գրավելով տարածքում, չի օգտագործվում պատշաճ ձևով:

7.2.2 Գնահատման մեջ հաշվի առնվող հնարավոր կատեգորիաների ստուգացանկ:

Գեղագիտական/Էսթետիկական,
Սոցիալական/քաղաքացիական
Տնտեսական:

Համաձայն առաջարկվող զարգացման ծրագրի, ակնկալվում է մեծ համագործակցություն զբոսաշրջության, սպորտային և մշակույթային ոլորտներում, հաշվի առնելով նաև քաղաքի բնակլիմայական բարենպաստ պայմանները և հարևանությամբ գտնվողբազմաթիվ բնական հուշարձաններն ու կոթողները: Ակնկալվում է միջազգային երաժշտական փառատոնների ու սպորտային մրցաշարերի անցկացում, բնության կողմից ստեղված այս գողտրիկ անկյունում: Այս առումով տարածքը հավակնում է միջազգային նշանակության կատեգորիայի:

7.3 Խոցելիության/ռիսկի գնահատում

Առանձնացված վայրի կառուցապատման խոցելի կողմերն են գետի հունի անբարեկարգ վիճակը, որի պատճառով մեծ ավերվածություններ կարող են առաջանալ հեղեղումների ժամանակ: Մոտեցման ճանապարհների բացակայությունը: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը, տարածքը դարձրել է անարդյունավետ, չնայած իր չափազանց հարմարավետ տեղադրությանը քաղաքի կառուցապատման մեջ:

Նկ.11. Տարածքը քաղաքի պատմական կենտրոնին կապող հետիոտն ճանապարհի տեսքը

Նկ.12. Տարածքը Գորիս գյուղին կապող հետիոտն կամուրջի տեսքը

Նկ.13. Տարածքը քաղաքի պատմական կենտրոնին կապող հետիոտն ճանապարհի տեսքը

7.4 Տեխնիկական վիճակ

Տարածքը ներկայումս ամբողջությամբ ծածկված է վայրի բուսականությամբ և որոշ հատվածներում ապականված աղբով: Գետի անկանոն հոսքի և գրունտային ջրերի անկառավարելի հոսքի պատճառով որոշ հատվածներում նկատելի է ջրի լճացում: Տարածքի անօգտագործելի վիճակը հետևանք է անբավարար ինստիտուցիոնալ աջակցության, պահպանման և բարեկարգման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ու ծրագրերի կառավարման հմտությունների բացակայության:

Նկ.14. Տարածքի ներկա վիճակը և Վարարակ գետի դիրքը

Նկ.15. Տարածքի ներկա վիճակը

7.5 Անհրաժեշտ վերանորոգման համառոտ նկարագիր

Զարգացման համար նախընտրած վայրում առաջնահերթ անհրաժեշտ է ամրացնել գետի հունը , կառուցել հենապատեր: Շինարարական աշխատանքների երկրորդ փուլը

մոտեցման ճանապարհների կառուցումն է, ջրահեռացման համակարգի ստեղծումը: Նպատակահարմար է նախնական փուլում հիմնովին վերանորոգել նախկինում կառուցված ֆուտբոլային մարզադաշտը, որը կհանդիսանա սպորտային համալիրի կորիզը: Բնակիչների հետիոտն մատչելիությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերականգնել և արդիականացնել .Գորիս . գյուղի ու քաղաքի պատմական կենտրոնի թաղամասերի հետ հետիոտն ճեմուղիները՝ հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց և հեծանվորդների համար: Ծրագրի իրագործման սկզբից խիստ կարևոր է ամբողջ տարածքի ցանկապատումը՝ տարածքը վարի /թափառող շներ/ և հարևան բնակիչների կողմից պահվող ընտանի կենդանիների անպատեհ մուտքը արգելելու , տարածքի անվտանգությունը կազմակերպելու համար: Տարածքի հյուսիսային հատվածը նախատեսվում է կառուցապատել մշակույթային, վարչական, տեղեկատվական , հանգստի շինություններով ու գոտիներով, քանի որ այդ հատվածով անցնում է հիմնական տուրիստական հետիոտն երթուղին: Վերակառուցվող տարածքի հարավային և հյուսիսային հատվածներում նախատեսվում են ավտոկայանատեղեր: Տարածքի վերակառուցումը ամբողջականացնելու համար անհրաժեշտ է նաև վերակառուցել Օրբելյանների փողոցի տարածքին հարող մասը / Դիտակետ կոչվող վայրը / , որից կազմակերպվում են հետիոտն մոտեցումները դեպի մարզադաշտ ու հանգստի գոտիներ: Բարձրադիր դիրք ունենալով փողոցի այդ հատվածը ներկայումս էլ կատարում է դիտահրապարակի դեր բնակիչների ու զբոսաշրջիկների համար: Կառուցապատման հետ համատեղ կզարգանա նաև ենթակառուցվածքների ցանցը, հաշվի առնելով ժամանակի պահանջը: Վերանորոգումից հետո ակնկալվում է զվարճանքի և սպորտային համալիրի ստեղծում, փակ և բաց մարզասրահներով: Նախատեսվում է ունենալ ֆուտբոլի, մեծ թենիսի, վոլեյբոլի, բասկետբոլի մարզադաշտեր, որոնք համայնքի բնակիչների կարիքները բավարարելուց բացի կհանդիսանա հարմարավետ սպորտային կենտրոն հանրապետական և միջազգային մրցաշարերի անցկացման համար: Հարակից տարածքներում ակնկալվում է ինֆրաստրուկտուրայի զարգացում /հյուրատներ, հանգստյան տներ, ճամբարներ /, որի պարագայում համալիրը կգործի ամբողջ տարին, որպես սպորտային ճամբար՝ մեծ եկամուտներ բերելով համայնքի բյուջեին և բնակիչներին: Առաջնահերթ խնդիր ենք համարում մշակույթային ժառանգության վերականգնումը՝ մասնավորապես այդ տարածքում տեղակայված մեծաքանակ ձիթհանների, ջրաղացների և դրանց սպասարկման շինությունների վերականգնումն՝ հնարավորության դեպքում նաև վերականգնելով ավանդական արտադրության այդ ծյուղերը / կանեփի և կտվիատի ձեթի արտադրություն, տեղական ալյուրի արտադրություն/:



Նկ.17. Տարածքի կառուցապատման առաջարկ

7.6 Կոնսերվացման/վերականգնման քաղաքականություն և առաջարկներ

7.6.1 Վայրի տեսլականի և դրա կայունության վերաբերյալ ամփոփումը նախնական փուլում:

Քաղաքի 600հա կառուցապատման տարածքից այդ մասի անձնացումը ինքնքնպատակ չէ:

Վայրի զարգացումը հիմք դնելու Վարարակն գետի ափամերձ տարածքների հետագա վերակառուցմանը և վերակենդանացմանը, որը ձգվելով քաղաքի ամբողջ տարածքով հյուսիսից հարավ, միացնելով բազմաթիվ մշակույթային, գիտական, սպորտային , տուրիստական կառույցներ, կստեղծի հանգստի միասնական արդիական գոտի՝ զարգացնելով նաև հարակից բնակելի թաղամասերը , որոնց մի զգալի մասի վերակառուցման ու արդիականացման նախագծային աշխատանքները սկսված են, իսկ շինարարական աշխատանքները ըստ ՀԲ-ի աշխատանքային պլանի պետք է սկսվեն 2017թ-ից, ընդգրկվելով պատմական կենտրոնի կորիզը՝ շուրջ 4 հա մակերեսով:

7.6.5 Սոցիալական կիրառումների և կայուն զարգացման հնարավորություններ:

Տարածքի զարգացումը հնարավոր է միայն որակյալ վերապատրաստված աշխատակազմի ներգրավմամբ, որի մոտավոր քանակությունը կարող է գերազանցել 100-200 աշխատակից՝ սպասարկման անձնակազմից մինչև ադմինիստրատիվ մաս: Քանի որ տարածքը հարակից է՝ բնակելի թաղամասերին, բուռն թափով կզարգանան հյուրանոցային սպասարկումը, առևտուրը և տնայնագործական արհեստները, ընդգրկելով անաշխատունակ բնակչության զգալի մասը, լուծելով հանրապետության և համայնքի համար այդքան անհրաժեշտ բնակչության անաշխատունակության հարցը, և համայնքային բյուջեի ֆինանսական կայունացման խնդիրը:

7.6.7 Հանրամատչելիություն:

Սպորտային, մշակույթային ու զբոսաշրջիկային նախատեսվող համալիրը անպայմանորեն կծառայի համայնքին, հաշվի առնելով նաև այն փաստը , որ համայնքը նմանատիպ համալիրի ստեղծումը համարում է գերակա խնդիր :

7.6.8 Այլ առավելություններ:

Համալիրի կազմակերպումը նախատեսում է հանրապետական, մարզային նույնիսկ միջազգային փոքրամաշտաբ մրցաշարերի, փառատոնների, գիտաժողովների անցկացում, հաշվի առնելով քաղաքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական հիանալի պայմանները:

7.7 Ֆինանսներ

Ընդհանուր տարածքի վերակառուցումը նախատեսում է երկարաժամկետ կառուցապատման աշխատանքներ շուրջ 6.5 հա մակերեսի վրա, որի ֆինանսական թեկուզև մոտավոր հաշվարկը բավական դժվար ու անիրական է, քանի որ դեռևս հստակ չեն նախատեսվող կառույցների ընդհանուր մակերեսներն ու ծավալները: Հնարավոր ներդնողների ընդգրկման համար առաջնահերթ է ունենալ կառուցապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթ, համաձայնեցված տեղական իշխանությունների և շահագրգիռ մարմինների հետ: Առաջին փուլում անհրաժեշտ է տարածքի բարեկարգման, հենապատերի և արգելափակոցների կառուցման, մոտեցող ճանապարհների կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթեր , կառուցապատման ճարտարապետական առաջարկ- նախագծեր, որոնց արժեքը ըստ նորմերի կկազմի 35-40 մլն դրամ /69000-80000 եվրո/, իսկ վերոհիշյալ շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը – 1 745 640 մլն դրամ /3 436 300 եվրո/ , որը ներառում է շուրջ 6.5հա տարածքի բարեկարգում /65000 x 21000= 1 36 5 000 մլն /2 687 700 եվրո /, 965գմ հենապատի կառուցում /965 x 2 x 48000= 92.640 մլն / 182 360 եվրո /, 1000գծմ երկարությամբ գետի հունի մաքրում /1000 x 145 000= 145.0 մլն /285 500 եվրո / , 6500քմ ճանապարհի կառուցում /6500 x 22000= 143.0 մլն/ 281 500 եվրո /:

7.7.1 Բյուջետային կարիքների ընդհանուր գնահատում և փուլայնություն:

Չկան

7.7.2 Ներդրումների ներգրավման(իրական) հնարավորությունների գնահատում:

Հաշվի առնելով ՀՀ կառավարության, միջազգային և տեղական կազմակերպությունների մեծ հետաքրքրությունը Գորիս քաղաքի հանդեպ, ներկայումս

ընթացքի մեջ գտնվող ծրագրերը, իրատեսական է այս հատվածի համար ներդրումների ներգրավման գործընթացը: Հարկ է նշել որ Գորիսի իշխանությունները մեծ ակնկալիքներ ունեն IDEA հիմնադրամից, որոնց կողմից ներդրումը այս ծրագրին կստեղծի փոխշահավետ համագործակցություն՝ ամբողջացնելով հիմնադրամի ներդրումային մեծ ծրագիրը: Հայաստանի Զարգացման հիմնադրամը իրականացնելով մեծածավալ ներդրումային նախագիծ, նախնական հետազոտություններ է կատարում մեր կողմից առաջարկվող տարածքում, քանի որ այն գտնվում է քաղաքի վերակառուցվող հատվածին հարակից: Քաղաքը ունի սփյուռքի մեծ պոտենցիալ, որոնք իշխանությունների կողմից ճիշտ ներկայացնելու դեպքում կարող են իրականացնել մեծ ներդրումներ, իրենց բիզնեսը կազմակերպելուց բացի ստեղծելով շահավետ միջավայր համայնքի համար: Այսպիսի հետաքրքիր միջավայրում միջազգային չափանիշներով սպորտային համալիրի ստեղծումը չի կարող անմասն թողնել նաև ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարությանը: Համոզված ենք, որ հաշվի առնելով քաղաքի բնակլիմայական պայմանները, շահեկան դիրքը և քաղաքը որպես տուրիզմի կենտրոն դարձնելու ՀՀ կառավարության ծրագրերը կխթանեն նաև նախարարության կողմից նոր ծրագրերի ներդրմանը: Այսօր արդեն ըստ քաղաքապետարանի համապատասխան բաժինների մասնագետների հայտարարությունների, նախապատրաստվում և տարբեր կազմակերպությունների ու անհատ ներդրողներ հետ քննարկվում են բազմաթիվ հետաքրքիր ծրագրեր, որոնք համոզված ենք կյանքի կկոչվեն ճիշտ և ժամանակին ներկայացնելու դեպքում:

7.7.3 Ներդրումների վերականգնման (իրական) հնարավորությունների գնահատում:

ՀՀ պետական ծրագրերով և Գորիս քաղաքի զարգացման ծրագրով համայնքի զարգացման գերակա ճյուղ է ընդունվել զբոսաշրջությունը, որի տրամաբանության մեջ նմանօրինակ ենթակառուցվածքի ստեղծումը կխթանի ոչ միայն տուրիզմի զարգացմանը , այլ կհանդիսանա բիզնեսների զարգացման կարևորագույն տարածք: Նախատեսված ծառայություններից Գորիսի 21555 բնակիչներից բացի կօգտվեն նաև ամենամյա քաղաք այցելող շուրջ 7000- 10000 զբոսաշրջիկները, համատեղ նպաստելով ներդրումների վերականգնմանը և ոլորտի հետագա զարգացմանը, կխթանի հյորանոցային բիզնեսը, տեղական արտադրությունը, որը կնպաստի ներդրումների կայուն և արագ վերականգնմանը

7.7.4 Արդյոք փորձե՞լ եք միջոցներ հայթայթել տվյալ վայրի կամ հուշարձանի համար:

Եթե այո, ապա ներկայացրեք մանրամասները:

Գորիսի քաղաքային իշխանությունների կողմից ՀՀ կառավարություն , Սյունիքի մարզպետարան ներկայացված են առաջարկություններ, խնդրագրեր խաղադաշտի վերազինման և հարակից փողոցների վերանորոգման աշխատանքներ կատարելու համար: Հայաստանի զարգացման հիմնադրամի աջակցությամբ ներկայումս նախապատրաստվում են նախատեսված տարածքին հարակից հետիոտն ճանապարհի վերակառուցման, Վարարակն գետի հունի մաքրման նախագծային աշխատանքները:

7.7.5 Արդյոք ստացե՞լ եք միջոցներ տվյալ վայրի կամ հուշարձանի համար:

Եթե այո, ապա ներկայացրեք մանրամասները:

Բացի Գորիսի քաղաքային բյուջեից հատկացվող փոքրաքանակ միջոցներից, տարածքի սանիտարական մաքրման, խաղադաշտի մասնակի վերանորոգման և մոտեցման ճանապարհների մաքրման աշխատանքներ իրականացնելու համար, տվյալ վայրի համար այլ ֆինանսական միջոցներ չեն տրամադրվել:

7.8. Կառավարում

Նախատեսվող սպորտային-մշակույթային համալիրի կայուն զարգացումը և կառավարումը բխում է համայնքի շահերից և չի կարող անմասն լինել քաղաքի հեռանկարային զարգացման դրույթներից, որը ենթադրում է նաև համալիրի կենտրոնացված կառավարում ի շահ համայնքի և պետության: Կառավարումը անհրաժեշտ է իրականացնել համայնքի ավագանու կողմից ընտրված խորհրդի կողմից՝ ընդգրկելով տարբեր ոլորտներ համակարգող պատրաստված մասնագետներ: Խորհրդի գործունեությունը պետք է վերահսկվի և ամենամյա վերլուծության ենթարկվի համայնքի ավագանու կողմից:

9. Նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություններ

Հանգստի, զվարճանքի և բիզնեսի զարգացման համար նախընտրած տարածքը առաջնահերթ անհրաժեշտ է պաշտպանել քաղաքացիների կողմից վնասակար ներգործումից, աղտոտումից: Կառուցապատման առաջնային փուլը պետք է լինի մասնագետների կողմից տարածքի գեոդեզիական, երկրաբանական ուսումնասիրություններն ու քարտեզների կազմումը: Հաշվի առնելով այն փաստը , որ նշված տարածքներում 18-19-րդ դարերում զարգացած է եղել ձեթի արտադրությունը , անհրաժեշտ ենք համարում իրականացնել նաև հնեաբանական և երկրաբանական ուսումնասիրություններ: Առաջարկվող նախապատրաստական աշխատանքներից հետո միայն կարելի է սկսել նախագծային աշխատանքները, որոնք հանրային քննարկումների արդյունքում ընտրված առաջարկների հիման վրա սկսել աշխատանքային նախագծերի կազման փուլը:

ՆՏԳ-ն իրականացրել է՝ Գ. Գ. Փարսյան